

ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ

ՂԱԶՎԻՆԻ (ԻՐԱՆ) Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ղազվինի Ս. Հռիփսիմե եկեղեցու քահանա Տ. Ներսես Մեսրոպյան-Բալայանը հաղորդում է:

Սույն թվականի հուլիսի 25-ին, Ղազվինի Ս. Հռիփսիմե եկեղեցու հիմնադրման հիսնամյակի առթիվ, նույն եկեղեցում մատուցվեց հանդիսավոր ս. պատարագ: Օրվա պատարագիչն էր արժանապատիվ Տ. Ռուբեն քհն. Հայրապետյանը:

Ս. պատարագին իր մասնակցությունը բերեց Ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը՝ խմբավարությամբ Մարտիկ Ավետիսյանի:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Ս. Հռիփսիմե եկեղեցու բարերարներ Հովհաննես և Վարդենի Բարսեղյանների, նրանց դստեր՝ Հռիփսիմեի, Ղազվինի հայոց համայնքի 47 տարիների նվիրյալ հովիվ Տ. Հարություն ավագ քահանա Մեսրոպյան-Բալայանի և ղազվինահայ բոլոր բարերարների: Հոգեհանգստյան հուլիչ արարողության ավարտին ներկաներին ուղղված շնորհակալական խոսքով հանդես եկավ Ղազվինի հայոց եկեղեցական խորհրդի նախագահ արժ. Տ. Ներսես քհն. Մեսրոպյան-Բալայանը (որդին Ղազվինի հայոց նախկին հոգևոր հովվի՝ հոգելույս Տ. Հարություն քահանայի):

Սույն եկեղեցին կառուցվել է 1936 թ. Ղազվինի այն ժամանակվա հայոց հոգևոր հովիվ Տ. Հարություն քահանայի առաջարկով՝ ի հիշատակ սիրված ազգային Հովհաննես Բարսեղյանի վաղամեռիկ դստեր, որը վախճանվել էր 1934 թ.: Ս. Հռիփսիմե եկեղեցու օծումը կատարվեց 1937 թ.՝ ձեռամբ Իրանա-հնդկական կրոնական խորհրդի փոխնախագահ Տ. Թեոդորոս ծ. վրդ. Իսրայելյանի: 1947 թ. փոքրիկ Հռիփսիմեի աճյունը փոխադրվեց և ամփոփվեց Ս. Հռիփսիմե եկեղեցու գավթում: Նույն թվականին Ս. Հռիփսիմե եկեղեցու բարերարը ընտանիքով Ղազվինից տեղափոխվեց՝ բնակություն հաստատելով Մայր Հայաստանում:



1957 թ. Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսը, ընթացք տալով Ղազվինի հայոց հոգևոր հովիվ Տ. Հարություն քահանայի խնդրանքին, բարերար Հովհաննես Բարսեղյանին պարգևատրեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Ղազվինի հայոց հոգևոր հովիվ Տ. Ներսես քահանան 1980 թ. ուխտի եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Վեհարանում ընդունվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԵՋ

Այլոց առաջնորդարանիս ավանդություններեն մին հանդիսացող հայ ընթացավարտ աշակերտներու հետ հանդիպումը առաջնորդ սրբազան հոր այս ամառ տեղի ունեցավ 20 հուլիս 1986-ին, հրավերով Ազգ. Կեդրոնական Վարչության և մասնակցությամբ առաջնորդարանիս առընթեր հանձնախումբերու և քաղաքիս մեջ գործող հայկական միությանց ներկայացուցիչներուն:

Այս տարի ընթացավարտ հայ աշակերտներու հունձքը կհաշվեր 66 երիտասարդ ու երիտասարդուհիներ, որոնք Պաղտատի տարբեր երկրորդական վարժարաններե, ինչպես նաև համալսարաններու տարբեր ճյուղերե շրջանավարտ ըլլալով, կուգան խտացնելու իրաքահայ ուսյալ հույլին շարքը:

Սույն երեկույթին բացումը կատարեց Ազգ. Կեդրոնական Վարչության ատենապետ տոքթ. Պողոս Պողոսյանը: Հարգո ատենապետը անդրադարձավ մարդ էակի ներդաշնակ կարգացման մասին՝ բացատրելով, թե ամեն անհատ պարտավոր է կարգացնելու իր հոգին, միտքն ու մարմինը, որպեսզի իր ազգին մատուցած ծառայությունը ըլլա ավելի հիմնավոր: Տոքթոր Պողոսյանը ապա հրավիրեց առաջնորդ սրբազան հայրը տալու իր հայրական պատգամը շրջանավարտներուն:

Դիմելով շրջանավարտ երիտասարդության սրբազան հայրը իր պատգամի մեջ հաստատեց թե.

«Մեկի համար այս պահը նվիրական է ու հրաշագործ, որովհետև պահը ինքնին արդյունքն է երկարատև տարիներու տքնաջան աշխատանքի՝ վաստակված Ձեր ծնողներու արդար քրտինքով և Ձեր իսկ տրամադրած անհաշիվ ժամերու և օրերու որպես ճշմարիտ հատուցում: Պահը նաև տեսիլքի պահ մըն է, Ձեր անձնական տեսիլքի՝ բացված ապագային: Մի մոռնաք, որ ամեն մեկ հրաշքի սկզբնավորության տեսիլք մը կա: Հրաշագործ ըլլալու համար տեսիլք հարկ է ունենալ և գիտենք, համայն ստեղծագործության մեջ Աստուծմե բացի, միայն ու միայն մարդ էակն է, որ կարողությունը ունի հրաշք գործելու, եթե երբեք իր տեսիլքին քաջությունը և նվիրումի խոր գիտակցությունը ունենա:

Աստվածաշունչը, Սուրբ Գիրքը մեզի կսորվեցնե թե Աստված մարդը ստեղծեց որպես տեր և իշխան մյուս բոլոր արարածներուն վրա. այսինքն՝ բարին Աստված աշխարհը մարդուն հանձնեց: Մեզմե յուրաքանչյուրը նշանակված է որպես հոգատար ու խնամակալ: Մեկ խոսքով ամեն մեկս ունի իր պարտականությունները: Մեզի հանձնված պարտականությանց կատարումի ընդմեջեն կիրագործվի հրաշքը և մենք կդառնանք հաջողակ ու երբեմն՝ Մեծ: Եվ ընդհակառակը, ձախող կմնա այն անհատը, որ կպլանա իր պարտականությունները կատարելու, այսինքն կմերժե իր անձը նվիրաբերելու, իր անձը զոհելու»:

Իր պատգամի վերջավորության սրբազան հայրը հրավեր կարդաց շրջանավարտներուն ունենալու ծառայության գիտակցությունը՝ իրենց տաղանդն ու զարգացումն բաժին հանելով իրենց Մայր Եկեղեցվո ու սեփական ազգին, ինչպես նաև շինարար քաղաքացիներ հանդիսանալու իրենց երկրին:

Նման հանդիսություններ տեղի ունեցան նաև Իրաքի այլ հայաշատ կեդրոններեն՝ Քերքուկի և Պասրայի մեջ:

Վերոհիշյալ գաղութներու մեջ սրբազան հոր տված հովվական այցելութենեն օգտվելով, տեղվույն Թաղական Խորհուրդները ևս գնահատանքի երեկոներ կազմակերպած էին իրենց շրջանավարտ զավակներուն համար: Քերքուկի մեջ 15 անձ, իսկ Պասրայի մեջ 34 ընթացավարտներ կային: Սրբազան հայրը տվավ իր հորդորները և ոգևորեց նրանց ապագայի նկատմամբ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ

ՀԻՄՆԱՐԿԵՔ ԵԿԵՂԵՑՎՈ

Սույն տարվո օգոստոսի 10-ը բարեկենդանին Ս. Աստվածածինի Պահոց, հիշատակելի օր մը հանդիսացավ իրաքահայության ընդհանրապես, և ի մասնավորի Պաղտատի հայության համար: Ըստ նախօրոք եղած հայտարարության և կարգադրության, ինչպես նաև առաջնորդարանիս կողմե տրամադրված փոխադրական դյուրությանց, հապարե ավելի հավատացյալներ հավաքված էին նոր գերեզմանատան հողաշերտին վրա՝ մասնակցելու եկեղեցվո հիմնարկեքի արարողության:

Արարողությունը սկսավ առաջնորդ սրբազան հայր՝ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի գլխավորած թափորով, որուն մաս կկազմեին քահանայից դասը, դպրաց և սարկավագաց դասերը, նաև մեր քույր Եկեղեցիներեն՝ Ասորի Օրթոտոքս համայնքապետը՝ հանձինս Սեբերիոս Հավա Արք.-ի: Թափորին կիսնեին տասնվեց կնքահայրեր, որոնք հրավիրված էին առաջնորդարանիս կողմե և ընտրված համայնքիս մեջ

Հավարտ արարողության առաջնորդ սրբազան հայրը իր քարոզին մեջ հաստատեց.

«Քրիստոսի պատգամը հարկավոր է մշտապես կյանքի կոչել և ըստ այնմ ապրիլ մեր իսկ բարի իրագործումներու ճանապարհով: Ահավասիկ շինարարություն մը որպես քրիստոնեական առաքինություն, կհանդիսանա այն իրագործումներեն մին, որուն կատարումով մարդ էակը կկիրառե Արարչին կողմե իր մեջ վերեղված ստեղ-

Մի պահ հիմնարկեքի արարողությունից

գործող միություններու ներկայացուցիչներեն և գաղութիս երախտավոր ազգայիններեն: Կնքահայրերեն մին էր Ազգ. Կեդրոնական Վարչության ներկայացուցիչ և փոխատենապետ տիար Տիրան Ն. Օհանյան:

Սույն հոգեպարար արարողության ընթացքին առաջնորդ սրբազան հայրը, ըստ Մաշտոցի, օծեց կնքահայրերու ձեռքին եղած վեմ քարերը, անվամբ տասներկու առաքյալներու, չորս ավետարանիչներու, Պողոս առաքյալի և մեր Եկեղեցվո լուսավորիչ՝ Գրիգոր Պարթև Հայրապետի, ընդամենը տասնվեց վեմ քարեր: Սուրբ գրական ընթերցումներե հետո առաջնորդ սրբազան հայրը խնկարկելով օծված վեմ քարերը՝ կնքահայրերու աջակցությամբ կանոք վերեղեց կառուցվելիք եկեղեցվո սյուներու հիմերուն ներքո:

ծագործական հանճարը:

Այդ հողաշերտին վրա կառուցվելիք եկեղեցվո հիմնարկեքի սույն հոգեշեն արարողությունը մեր մեջ անգամ մը ևս կհաստատե այն համոզումը, թե հայ հավատացյալ ժողովուրդը երկնավոր վարդապետի պատգամներուն կիսնելու և շենցնելու տիրահաստատ կոչման ընդմեջեն»:

Քարոզի ավարտին սրբազան հայրը հանուն իրաքահայության երախտագիտական խոսք ուղղեց Իրաքի տիրախնամ պետության, որ նվիրատուն եղած էր սույն 100 000 քռ. մ. տարածությամբ հողաշերտին՝ օգտագործելու համար իբրև գերեզմանատուն պաշտատահայության:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԲՈՒՌՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այս տարի Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը հոգևոր ուրախության և ցնծության առիթ եղավ Մելբուռնի հայության համար:

Օգոստոսի 16-ին, շաբաթ օրը, Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց արժ. Տ. Արամայիս ավագ քհն. Միրզայանը: Ս. պատարագի ընթացքում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյանը կիսասարկավագ և ապա սարկավագ ձեռնադրեց Կիրակոս Փանոսյանին և Հարություն Պողոսյանին՝ շնորհելով նրանց «մաքուր և սուրբ ուրար»-ներ, պաշտոն՝ «Աւետարան ընթերցելու և խընկարկելու»:

Սարկավագական ձեռնադրության խարտավիլակի պաշտոնը կատարեց Հարություն սրկ. Հանմյանը:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ Կիրակոս սրկ. Փանոսյանի քահանայական կոչման հուլիչ արարողությունը: Ընծայյալը խորանի առջև ծնրադիր արտասանեց Հայաստանյայց Եկեղեցու հավատամքը՝ ըստ Գրիգոր Տաթևացու բանաձևումի:

Օգոստոսի 17-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Օրվա մեծ տոնի առիթով Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի բարեջան առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյանը:

Պատարագչի «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած...» աղոթքից հետո սկսվեց քահանայական ձեռնադրության հոգեպարար արարողությունը:

Խարտավիլակի պաշտոնը ստանձնել էր Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանը:

«Աստուածային և երկնաւոր...» շարականի երգեցողության պահին ընծայյալը խորանի վրա ծնրադիր, ձեռքերը վեր բարձրացնելով, հրաժարվեց աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաւագութենէ ի քահանայութիւն Ս. Եկեղեցւոյ ըստ վկայութեան անձին իւրոյ»:

Ապա ս. պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»-ը, որից հետո նորընծան ծնկի գալով ձեռնադրիչ սրբազանի առջև՝ աղոթքով և օրհնությամբ ստացավ քահանայական փիլոն, սաղավարտ, շուրջառ և գոտի: Քահանայական լրիվ հանդերձանքով նորընծան ձեռնադրիչ Տ. Աղան սրբազանից ընդունեց քահանայական օծումն ու Սուրբ Հոգու շնորհները՝ վերանվանվելով Տ. Ասողիկ քահանա: Ձեռնադրիչ սրբազան հայրը Սուրբ Հաղորդության սկիհը փոխանցեց նորընծային՝ շնորհելով ս. պատարագ մատուցելու իշխանություն: Նորընծա Տ. Ասողիկ տեր հայրը իր անդրանիկ օրհնությունը բաշխեց եկեղեցում հավաքված հավատացյալ ժողովրդին՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ ձեռնադրության հուլիչ արարողության, ձեռնադրիչ Տ. Աղան եպս. Պալիոզյանը քարոզ խոսեց՝ վեր հանելով եկեղեցականի ծառայության նվիրական կոչումը Աստուծո, Եկեղեցու և ժողովրդի հանդեպ: Սրբազան հայրը իր քարոզի մեջ ասաց, որ այդ անվամբ կոչեց նորընծային՝ ի հիշատակ հանգուցյալ Տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղալարյանի: Հանգուցյալ սրբազան հայրը առաջին հայ եկեղեցականն է եղել, որ 1950-ական թվականներին ժամանել է Ավստրալիա, որպես ծայրագույն վարդապետ, և Ավստրալիայի տարածքի վրա ցրված հայի բեկորները համախմբելով՝ եղել է նրանց հոգևոր մատակարարը և ազգային ոգի ներշնչողը:

«Ողջոյն»-ի պահին ձեռնադրիչ սրբազան հայրը ողջագուրվեց նորընծա Տ. Ասողիկ քահանա Փանոսյանին, որին հետևեցին «քահանայք և սարկաւագք»:

Հավարտ ս. պատարագի նորընծային շնորհավորեցին ձեռնադրության հոգեպարար արարողությանը ներկա գտնվող խուռներամ հավատացյալներ:

Նորընծայի կնքահայրության պաշտոնը սիրով հանձն առավ տիար Սիրական Տելիքայանը՝ մի եկեղեցասեր և հայրենասեր հայորդի:

Նորընծան իր քառասնօրյա առանձնացման օրերը կանցկացնի Սիդնեյի հայոց առաջնորդարանում՝ սրբազան հոր հսկողության ներքո:

Տ. Ասողիկ տեր հայրը փոքր տարիքից ծառայել է եկեղեցում, որպես դպիր: Անցնող տասը տարիների ընթացքում կանոնավորապես մասնակցել է Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում կատարվող հոգևոր արարողություններին:

Տ. Ասողիկ քահանան ժամանակավորապես պետք է ծառայի Մելբուռնի Ս. Աստվածածին եկեղեցում որպես հոգևոր հովիվ, մինչև մնայուն հոգևոր հովվի ժամանումը, որից հետո պետք է ծառայի Սիդնեյի առաջնորդարանում:

Մի պահ քահանայական ձեռնադրությունից

Բարեշնորհ Հարություն սարկավագ Պողոսյանը, որ փոքր տարիքից եկեղեցական ծառայության սեր ուներ, նախ ծառայել է Երուսաղեմի սրբավայրերում և ապա Սիդնեյ քաղաքում հաստատվելուց ի վեր ծառայում է Ս. Հարություն եկեղեցում: Նա հանձն է առել շուտով կուսակրոն քահանայի կոչում ստանալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ու Սիդնեյ վերադառնալով ծառայել՝ ի մխիթարություն Սիդնեյի հայ համայնքին, որպես «Մշակք առանց ամօթոյ»:

ԹՂԹԱԿԻՑ



Նիկոլայ Ս. Բարբամյան ճարտարապետի Եղի դաշնքերից մեկի դիմաց՝ մեկնաբանությամբ ճարտարապետ Ս. Բարամյանի

ՆԻՑՑԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ «ՊԱՐՍԱՄՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ»-Ի ՀԻՄՆՈՐՀՆԵՔԸ

Ինչպես հայտնի է, արդեն 63 տարի է, ինչ գոյություն ունի Նիցցայի հայ գաղութը՝ իր հոգևոր ու աշխարհիկ բուռն կյանքով: Իսկ տեղի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին հիմնադրվել է 1927 թվականի օգոստոսի 17-ին:

Սույն թվականի օգոստոսի 16 և 17 օրերը ցնծության և բերկրանքի օրեր եղան տեղի հայ համայնքի համար:

Օգոստոսի 16-ին, ըստ մեր նախնյաց սովորության, ժրաջան հայ կանայք հայկական կաթսաների մեջ մատաղ էին եփում, որպեսզի հաջորդ օրվա Վերափոխման տոնը նշանակալից տարեթիվ դառնա հայկական գաղութի կյանքում:

Օգոստոսի 17-ին, կիրակի.—Վերափոխումը Ս. Աստուածածնի.

Վաղ առավոտյան Ս. Աստվածածին եկեղեցու զանգակները ավետում են բացառիկ օրվա պայծառ լուսաբացը: Մատուցվեց սուրբ պատարագ, որի երգեցողությունը կատարում էր Մարսելից հրավիրված «Գուսան» երգչախումբը:

«Պարսամյան Համալիր»-ի հանդիսավոր հիմնարկեքի արարողությանը Մարսելից հրավիրվել էր գերաշնորհ Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը՝ անձամբ ղեկավարելու օրվա հանդիսությունները:

Օրվա ս. պատարագից և խաղողօրհնեքից հետո կատարվեց Ս. Աստվածածին եկեղեցուն կից կառուցվելիք «Պարսամյան Համալիր»-ի հանդիսավոր հիմնօրհնեքը:

Հիմնօրհնեքի եկեղեցական արարողությունից հետո համալիրի հիմքում կետեղվում են մեռնի սրվակ և նշխար՝ փոքրիկ տուփերի մեջ փակված:

Ապա օրվա հանդիսավար Տարոն ծայրագույն վարդապետ Ճերեճյանը ընթերցում է մի հիշատակարան՝ «Պարսամյան Համալիր»-ի հիմնօրհնեքի առթիվ, որը նույնպես կետեղվում է փորված հիմքում:

Այնուհետև նահանգապետի ներկայացուցիչ պրն. Փելիսիեն և Համալիրի բարերար պրն. Թորոս Պարսամյանը համատեղ փակում և ծեփում են փոսը՝ ջերմ և սրտագին բուռն ծափահարությունների ներքո:

«Պարսամյան Համալիր»-ի հիմնօրհնեքի առթիվ սրտի ջերմ խոսք ասացին Տարոն ծայրագույն վարդապետ Ճերեճյանը, Կրոնական Ընկերակցության վարչության ատենապետ պրն. Գրիգոր Աժտերխանյանը և այլ պաշտոնական անձինք:

«Պարսամյան Համալիր»-ի հանդիսավոր հիմնօրհնեքի արարողությունից հետո տրվեց ճոխ համերգ:

Համաձայն նախագծի, «Պարսամյան Համալիր»-ը իրենից ներկայացնելու է երկհարկանի ճոխ մի շինություն՝ իր պարտեզով:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԶՈՒՅԳ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐԻ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի բարձր հրահանգով, սույն թվականի հոկտեմբերի 10—17 օրերին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արք. Պոլատյանը պաշտոնական այցով մեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու Կ. Պոլսի հայոց պատրիարքական Աթոռի հիմնադրության 525-ամյակի և Կ. Պոլսի Սրբազան Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի գահակալության 25-ամյակի հանդիսությանց:

Այս առթիվ Ստամբուլ էին ժամանել՝ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը՝ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ, Տ. Վաչե արք. Հովսեփյանը՝ ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ, Տ. Ավագ եպս. Ասատուրյանը՝ Իրաքի հայոց թեմի առաջնորդ, և Տ. Արիս եպս. Շիրվանյանը՝ առաջնորդական փոխանորդ Սան Ֆրանցիսկոյի հայոց, հանուն իրենց թեմերի մասնակցելու սույն հանդիսությանց:

Ընդառաջելով իրենց ուղղված հրավերներին՝ Ստամբուլ էին ժամանել նաև Հռոմի Սրբազան Քահանայապետի ներկայացուցիչ մոնսենյոր Սեբաստիանի Սերգիոն՝ ընկերակցությամբ մոնսենյոր Մարսել Գորինթիոյի, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Ամպրոզ Վիքս եպիսկոպոսը, Սալիսբուրգի Արքեպիսկոպոս Կարլ Պեյը, ԵՀԽ-ի ներկայացուցիչ Տիար Գասսան Ռուբեյցը, գերմա-

նական ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ դր. Էդուարդ Լոհսե՝ եպիսկոպոսը, կանանց երկրների դեսպանները:

Հանդիսություններին ներկա էին նաև տեղի այլ քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչներ, հայ կաթողիկե համայնքի կողմից՝ հայր Պետրոս վրդ. Գավուքյանը, Մխիթարյան Ուխտի կողմից՝ հայր Գաբրիել վրդ. Անանյանը և հայր Սարգիս վրդ. Էրմեն, ինչպես նաև հայ և օտար կրթական, բարեսիրական ու հասարակական կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ օրը, Սրբոց Թարգմանչաց վարդապետաց տոնի առթիվ, Սկյուտար թաղամասի Ս. Խաչ եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Տ. Գառնիկ ավագ քահանա Հալաջյանը, իսկ օրվա տոնի առթիվ հավուր պատշաճի քարոզեց Ամենապատիվ Սրբազան Պատրիարքը՝ վեր հանելով թարգմանիչ եռամեծ վարդապետներ Սուրբ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու կատարած անգնահատելի դերը հայ կյանքում:

Հավարտ սուրբ պատարագի Ս. Խաչ եկեղեցու սրահում տեղի ունեցավ «սիրո ճաշ», որի ընթացքում օրվա խորհրդի մասին ելույթներ ունեցան Տ. Տիրայր, Տ. Վաչե, Տ. Ներսես արքեպիսկոպոսները, Տ. Արիս, Տ. Ավագ և Տ. Մեսրոպ եպիսկոպոսները, ինչպես նաև եկեղեցու հոգաբարձության անդամները:

«Սիրո ճաշ»-ի ավարտին Ամենապատիվ Պատրիարք Հոր գլխավորությամբ հյուրերը այցելեցին Ս. Խաչ դպրեվանքը, ծանոթացան հոգևոր այդ հաստատության կրթական-ուսումնական ծրագրին և աշակերտությանը, ապա եղան Բաղդար Բաշիի հայոց գերեզմանատունը՝ «հոգւոց արտասանելու» վաղամեռիկ բանաստեղծներ Պետրոս Դուրյանի, Մատթեոս Զարիֆյանի, ուսուցչապետ Ռեթեոս Պերպերյանի և համայն հայ երախտավոր ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

Նույն օրը, երեկոյան, Ամենապատիվ Սրբազան Պատրիարքի նախագահությամբ Ղալաթիա թաղի Ս. Գրիգոր Լուսավորիչ գլխավոր եկեղեցում տեղի ունեցավ կիրակմտի հանդիսավոր ժամերգություն: Մայր Աթոռի ներկայացուցիչ Տ. Ներսես արք. Պոլսայլանը էջմիածնական եղանակով կատարեց «Լոյս կուարթ»-ի հոգեպարար մեղեդին: Կիրակմտի խորհրդավոր ժամերգությանը փութացել էին ներկա գտնվել մեծ թվով հավատացյալներ:

Հոկտեմբերի 13-ին, կիրակի, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցվում Գումգափուի պատրիարքանիստ մայր եկեղեցում: Պատարագիչն էր Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքը: Առավոտյան ժամը 10.30-ին եկեղեցու կանգերի ողողանջի և «Խորհուրդ խորին» երգի քաղցրալուր հնչյունների ներքո բազմամարդ թափորը, շքեղորեն զգեստավորված, ի գլուխ ունենալով Սրբազան Պատրիարքը, ուղղվում է դեպի մայր եկեղեցի: Բազմահազար հավատացյալներ, աջահամբույրներ, երանական հուզումի արցունքներ, բարի մաղթանքներ և աղոթքի մրմունջներ:

Մայր եկեղեցում 250 անդամներից բաղկացած երգչախումբը, ղեկավարությամբ խմբավար Ժիրայր Արզանյանցի, հաղթականորեն հնչեցնում է «Հրաշափառ Աստուած»-ը: Եկեղեցու աջակողմյան դասում իրենց տեղերն են գրավել հյուր հոգևորականներ, իսկ ձախակողմյան դասում՝ դեսպաններ, հյուպատոսներ և պաշտոնական այլ անձինք: Սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը: Քարոզից առաջ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի պատվիրակ Տ. Ներսես արք. Պոլսայլանը ընթերցում է Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնադրության 525-ամյակի և Տ. Շնորհք Պատրիարքի գահակալության 25-ամյակի առթիվ Հայոց Հայրապետի գրած սրբատառ կոնդակը:

Ի դիմաց իրենց թեմերի և համայն ժողովրդյան ողջույնի խոսքով հանդես են գալիս Տ. Տիրայր արք. Մարտիկյանը և Տ. Վաչե արք. Հովսեփյանը: Այնուհետև քարոզում է օրվա պատարագիչ Ամենապատիվ Տ. Շնորհք Սրբազան Պատրիարքը և անդրադառնում Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնադրության տարեդրությանը և ապա իր գահակալության 25 տարիների գործունեությանը:

Սուրբ պատարագի ավարտին Հայ Եկեղեցու ներկա բոլոր բարձրաստիճան հոգևորականների մասնակցությամբ կատարվում է խորհրդավոր հոգեհանգստյան պաշտոն ի հիշատակ ննջեցյալ այն բոլոր պատրիարքների, որոնք անձանձրույթ նվիրումով ծառայել են Կ. Պոլսի նվիրապետական սուրբ Աթոռին:

Այնուհետև թափորը հանդիսավորապես դուրս է գալիս մայր եկեղեցուց և շարժվում դեպի պատրիարքարանի շենքի մուտքը, որտեղից Սրբազան Պատրիարքը բազմահազար հավատացյալներին տալիս է իր օրհնությունը:

Նույն օրը, կեսօրվա ժամը 13.30-ին, պատրիարքարանի սրահում, Սրբազան Պատրիարք Հոր նախագահությամբ տրվում է մասնավոր ճաշկերույթ՝ ի պատիվ ներկա



Մի սան հոգևորականաց դասատեղյակներ ցնդրամեխանական

բոլոր հյուր հոգևոր պետերի և ներկայացուցիչների: Ճաշի ընթացքում Տ. Շնորհք Պատրիարքը հանդես է գալիս ողջույնի խոսքով՝ առանձին-առանձին ողջունելով բոլոր ներկաներին: Ի պատասխան Պատրիարք Հոր ողջույնի խոսքի, շնորհավորական խոսքերով հանդես են գալիս մեծարգո հյուրերը՝ իրենց բերած նվերները հանձնելով Նորին Ամենապատվությանը: Այս առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից ելույթ է ունենում Տ. Ներսես արք. Պոլատյանը:

Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, հյուրերը այցելում են Ս. Փրկիչ հիվանդանոցը: Մատռան մեջ տեղի ունեցած կարճ աղոթքից հետո, հիվանդանոցի հիմնադիր բարերարների՝ Կյուլպենկյան գերդաստանի դամբարանների առաջ կատարվում է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն: Ապա հյուրերը ծանոթանում են հաստատության բոլոր բաժանմունքներին՝ ծերանոց, հիմարանոց, դարմանատուն և այլն:

Հիվանդանոցի հոգաբարձությունը և բժշկական կազմը տվեց ճաշկերույթ, ի պատիվ այցելու բարձրաստիճան հոգևորականների: Ճաշկերույթի ընթացքում հոգաբարձության անունից ելույթներ ունեցան՝ ատենապետ Տիար Փիյո Աթան, դոկտ. Օնիկ Չալըքյանը, բժշկապետ դոկտ. Մարտիրոս Ենիեորգան և ուրիշներ: Ի դիմաց հյուր սրբազան հայրերի շնորհավորական խոսքով հանդես եկավ Տ. Ներսես արքեպիսկոպոսը: Իր խոսքում սրբազանը Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունը հաղորդեց վերոհիշյալ հաստատության անձնակազմին, ապա գնահատական խոսք ասաց հոգաբարձության անդամներին, բժշկապետին, բժշկական դասին, ավագ քույրերին և բոլոր ծառայողներին ու մաղթեց, որ Ս. Փրկիչը ինչպես անց՝ալում, այնպես էլ այսուհետև շարունակի կատարել իր մարդասիրական, օգտակար դերը հասության կյանքում: Սրբազանը նաև օրհնեց հիշատակը հիմնադիրների և նրանց, ովքեր կանգուն են պահում սուն հաստատությունը:

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Գումգափուի հայոց պատրիարքարանի սրահներում տեղի ունեցավ մասնավոր հյուրասիրություն Կ. Պոլսի հայոց պատրիարքության 525-ամյակի և Ամենապատիվ Սրբազան Պատրիարքի գահակալության 25-ամյակի տոնախմբությանց առթիվ: Այս կապակցությամբ հայոց պատրիարքարան էին եկել Հայ Եկեղեցու բարձրաստիճան սրբազան հյուրերը, հռոմեական կաթողիկե Եկեղեցու և Սրբազան Պապի ներկայացուցիչը՝ իր շքախմբով, Հունաց Տիեզերական Պատրիարքության կողմից՝ միտրոպոլիտներ, անգլիկան Եկեղեցու երեք ներկայացուցիչներ, դեսպաններ, հյուպատոսներ, ազգային հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև թուրք պետական իշխանությանց ներկայացուցիչներ՝ ի գլուխ ունենալով Ստամբուլի կուսակալ Նեվզար Այալը:

Հյուրասիրության վերջում Սրբազան Պատրիարքը հանդես եկավ ողջույնի խոսքով՝ շնորհակալություն հայտնելով ներկա հյուրերին, որոնք բարեհաճել էին իրենց ներկայությամբ ճոխացնել և պատվել հայոց պատրիարքության այս տոնակատարությունը: Պատասխան խոսք ասաց Ստամբուլի կուսակալ Նեվզար Այալը՝ շնորհավորելով Սրբազան Պատրիարքին այդ վայելչ տարեդարձների առթիվ:

Հոկտեմբերի 14-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, հյուր բարձրաստիճան հոգևորականները այցելեցին Շիշլիի հայոց գերեզմանատունը, ուր թաղված էին մեծ թվով պատրիարքներ, հայ մտքի մշակներ ու մտավորականներ: Վասն հանգրեն ննջեցելոց կատարվեց հոգեհանգիստ:

Նույն օրը, կեսօրին, Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները այցելեցին Գուրուչեշմեի Երևման Ս. Խաչ եկեղեցի՝ ընդառաջելով եկեղեցու խնամակալների և ժողովրդյան ցանկությանը: «Հրաշափառ»-ով հանդիսավորապես եկեղեցի ընդունվելուց հետո, հոգևորականների խումբը ուղղվեց դեպի Զաքարիա պատրիարքի գերեզմանը, որտեղ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Արարողության ավարտին եկեղեցու սրահում հյուր բարձրաստիճան հոգևորականների ի պատիվ տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում բազմաթիվ սրտագեղ խոսքեր արտասանվեցին հյուրերի և հյուրընկալների կողմից: Ճաշկերույթի ավարտին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվիրակ Տ. Ներսես արքեպիսկոպոսը խոսք առնելով, ներկաներին բերեց Հայոց Հայրապետի օրհնությունները Սուրբ Էջմիածնից ու իր գնահատանքը հայտնեց պոլսահայությանը՝ նրա եկեղեցասիրության և ազգային ժառանգությանց ու հայ մշակույթի նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրության համար:

Կ. Պոլսի հայոց պատրիարքության հիմնադրության 525-ամյակի և Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսի գահակալության 25-ամյակի տոնախմբության օրերը եղան ուրախության, հոգևոր վերանորոգման և Հայ Եկեղեցու պատմության վերագնահատման օրեր պոլսահայության և բոլոր մասնակից հյուրերի համար:

Այս հիշատակելի օրերի ընթացքում հյուր հոգևորականները այցելեցին «Մարմարա» թերթի խմբագրատուն, ծանոթացան խմբագրապետ Տիար Ռ. Հատտեջյանին, առիթը

ունեցան ծանոթանալու նաև «Ժամանակ» օրաթերթի խմբագրապետ Տիար Արա Գոչին: Սեղանակից եղան քահանայից դասին, բաժանեցին նրանց մտահոգությունները և վերահաստատեցին մեր հոգևոր եղբայրության ուխտը: Այցելեցին մի քանի հայկական եկեղեցիներ, որոնց վերանորոգման համար վերջապես արտոնություն էր ձեռք բերվել և որոնք աստիճանաբար վերանորոգվում էին: Շփվեցին հայ հավատացյալների հետ, վերարծարծեցին նրանց հավատը դեպի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մեր սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հոկտեմբերի 17-ին, ուրբաթ օրը, հյուրաբար ներկա սրբազան հայրերը հրաժեշտ տվեցին Ամենապատիվ Սրբազան Պատրիարքին՝ շնորհակալություն հայտնելով սրտաբաց հյուրընկալության համար:

ԹՂԹԱԿԻՑ

ԼՈՒՐԵՐ ԹՈՐՈՆԹՈՅԻՑ

Մի պահ Ս. Երրորդություն եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունից (19 հոկտեմբեր 1986 թ.)

Ինչպես հաղորդել ենք (տես «Էջմիածին» ամսագիր, 1986 թ., № Ե, էջ 47—48), Թորոնթոյի հայությունը որոշել է նոր եկեղեցի կառուցել: Այս առթիվ ներկայացնում ենք Ս. Երրորդություն եկեղեցու մանրակերտը և հիմքի տակ դրված օրհնության գիրը.

«Եղեւ օրհնութիւն անկիւնաքարի եւ հիմանց Հայաստանեայց Եկեղեցւոյ Թորոնթոյի, ի Գանատա. Յամի 1986-ի 19 Հոկտեմբերի յաւուրն Կիւրակէի:



Թարգմանիչի Սուրբ Երամիայի
Հայաստանեցի Եկեղեցու
Նոր Տունը

Ի Հայրապետութեան Հայոց
Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՌԱՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Ձեռամբ
Առաջնորդին Հայոց Գանատայի
ՏԵԱՌՆ ՎԱՉԳԷՆ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՔԷՇԻՇԵԱՆԻ

Արդեամբ նուիրատուութեամբ բարեպաշտ ժողովրդեան Հայոց: Տէր օրհնեսցէ զնուիրատուս եւ զշինողս Եկեղեցւոյս եւ համայն ժողովուրդ Հայոց Թորոնթոյի եւ շրջակայից:

'ԵՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ ՇԻՆՈՂԱՑ'
ԱՄԷՆ»: